



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ**

<< 19 >> 10 2012թ. N: 266-Ա ք. Գյումրի

**ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԱՅԻՆ ԹԻՄ ԶԵՎԱԿՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի <<ա>> և <<գ>> կետերի դրույթներով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 01/17/5250-12 հանձնարարականի.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ձևավորել աղետների ռիսկի նվազեցման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային թիմ՝ համաձայն հավելվածի:
2. Լիազորել աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմին՝
 - 1) ապահովելու նպաստավոր միջավայր աղետների ռիսկի նվազեցման մարզային և համայնքային խնդիրներով զբաղվող բոլոր շահագրգիռ կառույցների համար՝ աղետների ռիսկի նվազեցման ազգային ուղղվածության և Հյուսիսի գործողությունների ծրագրի առավել արդյունավետ իրականացման նպատակով,
 - 2) ներկայացնելու աղետների ռիսկի նվազեցման մարզային և համայնքային խնդիրները աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմում, մասնակցային եղանակով որոշելու լուծման ճանապարհները և հետամուտ լինելու դրանց իրականացմանը,
 - 3) նպաստելու և օժանդակելու աղետների ռիսկի նվազեցման գործառույթների իրականացմանը մարզային ու համայնքային մակարդակներում:
3. Հանձնարարել աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմի ղեկավարին՝ մինչև 2012 թվականի հոկտեմբերի 30-ը մշակել մարզային թիմի գործունեության կանոնակարգը և ներկայացնել հաստատման՝ նախօրոք <<Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ>> հիմնադրամի միջոցով համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարների հետ:



Իսկականի թիմի ճիշտ է՝

Ա. ԳԻՋԻՐՅԱՆ

ԿԱԶՄ
ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԹԻՄԻ

- Մարատ Սարիբեկյան - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետ, թիմի ղեկավար.
- Կառլեն Աբրահամյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ, թիմի անդամ.
- Լևոն Հովսեփյան - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ, թիմի անդամ.
- Մարզպետունի Մարգարյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ, թիմի անդամ.
- Գագիկ Գրիգորյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի գլխավոր անեսթեզիոլոգ, թիմի անդամ.
- Աշոտ Հախվերդյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային ենթակառուցվածքների գործունեության բաժնի գլխավոր մասնագետ, թիմի անդամ.
- Արմեն Ստամբուլյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ, թիմի անդամ.
- Հայկ Սարգսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ, թիմի անդամ.
- Սամվել Քոչարյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի գլխավոր մասնագետ, թիմի անդամ:

« ՀԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ »

Խ. ՊՈՂՈՍՅԱՆ